

81

LIBRARY  
OF THE  
MUSEUM OF NATURAL HISTORY

7777

REPRODUCTION  
OF THE  
LIBRARY OF THE  
MUSEUM OF NATURAL HISTORY

29904400

Handwritten text, possibly a name or address, partially obscured by damage.

Handwritten text, possibly a name or address, partially obscured by damage.

Vertical handwritten text on the right side of the fragment.

Small circular stamp or mark on the right side of the fragment.

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ

Ք Ր Ի Ս Տ Ի Մ Ա Վ Ա Ն

Վ Ա Ր Գ Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Ի Ի Ն


116



13245

Ա Ս Ի Թ Ա Ն Է

)(1874)(







Քրիստոնէսյ ղ շ ի կնոս ըսել, թէ ե-  
 Ռ-ը լաւութեամբ հասարակ ին ճանչնամ, ե- շ ի կըթ-  
 նաբ յոյս ունենալ յաւերեանիման ժրիւ-թեան  
 հասնելու, եթէ որ շ ի ժիտեբ իմ շ ի ջանաբ սոր-  
 ջելու Քրիստոնէական հասարակ ճշմարտութեան-  
 ներք ե- ժրիւ-թեան հասնելու համար հարկաւոր  
 եղած բաները, թէ ե- ժիտեան ե- ժիտեաց -  
 ունենեմն պերտ եղածին պէս լինեաց ե- հե-  
 սոս ժիտել: Այս պարտաւորութեան Ռ-ը լա-  
 յութեամբ ճանչնալան ժիտ սպասեաց ղ  
 ըլլալու համար, ե- թէ յաւերեանիման ժրիւ-  
 թեան հասնելան սպասեմ ժրտաւորան ղ ըլլալ-  
 համար մեան Քրիստոնէի ժիտեալը անհրաժեշտ  
 պարտե եղած ճշմարտութեանները այս Համա-  
 սոս Քրիստոնէականին ժիտեալը սորձեցնելու  
 ջանտ ըրեբ եմտ նէ ալ, ժիտ ժիտեմ ժիտ Քրի-

Բնութեան մասին պարզեցնելու համար  
 քաղաքացիական պատճառով որով ինքն  
 արդեն չունենալով իր ընդհանուր  
 օրինակները որոշակի կերպով հաստատու  
 րենքով որով որով որով որով որով որով  
 անհրաժեշտ է :



ՔՐԻՍՏՈՆԷՍԿԱՆ

Վ. Բ. Գ. Ա. Պ. Ե. Տ. Ո. Ի. Թ. Ի. Ի. Ն.

Գ. Լ. Ո. Ի. Ի. Ս.

Ա. ստուծոյ էւ իշէն Անյանց Հրոյ :

Հրոյս : Ա. ստուած ինչ է :

Պ. ստուծիան : Ա. ստուած ամենա

կատարեալ էակ մըն է, երկնի եւ  
երկրի ստեղծողը եւ ամեն բանին  
Տէրն ու կառավարող :

Հոյ . Ա. ստուած քանի՞ է :

Պի . Ա. ստուած մի է :

Հոյ . Ա. ստուածոյ անձերը քանի՞ են :

Պի . Ա. ստուածոյ անձերը երեք են :

Հոյ . Ա. ստուածոյ այս երեք ան

ձերու անունները որո՞նք են :

ՊԷ . Հայր Աստուած , Որդին  
 Աստուած , Հոգին Սուրբ Աստուած :

ՀԾ . Աստուծոյ այս երեք ան-  
 ձերէն , ո՞րը աւելի առաջ կամ ա-  
 ւելի մեծ , կատարեալ ու ողոր-  
 մած է :

ՊԷ . Աստուծոյ երեք անձինքն  
 ալ մէկզմէկու հաւասար են ✕

---

### ԳԼՈՒԽ Բ .

Քրիստոսի Տեառն Ռբոյ Տարդեղոսեանը  
 Վրոյ .

ՀԾ . Աստուծոյ երեք անձերէն  
 ո՞րը մարդ եղաւ կամ մարմնացաւ :

ՊԷ . Ամենասուրբ Երրորդու-  
 թեան երկրորդ Անձը , որ է Որդին  
 Աստուած , մարդ եղաւ , այսինքն  
 մեզի պէս հոգի եւ մարմին առաւ ✕

Հօ . Որդին Աստուծոյ յուսմէ՞  
մարմին առաւ :

ՊԻ . Ամենասուրբ Երրորդու-  
թեան երկրորդ անձը , այսինքն Որ-  
դին Աստուած յԱմենասուրբ Կու-  
սէն Մարիամայ Հոգւոյն Սրբոյ զօ-  
րութեամբը մարմին առաւ : ✠

Հօ . Մարմնացեալ Որդւոյն Աս-  
տուծոյ ի՞նչ անուն կը արուի :

ՊԻ . Մարմնացեալ Որդին Աս-  
տուծոյ Յիսուս Քրիստոս կը կոչուի :

Հօ . Յիսուս Քրիստոս քանի՞ անձ  
ունի :

ՊԻ . Յիսուս Քրիստոս մի անձ  
ունի , որ է Անձն Աստուածային Որդ-  
ւոյն Աստուծոյ ✠

Հօ . Յիսուս Քրիստոս քանի՞ բը-  
նութիւն ունի :

ՊԻ . Յիսուս Քրիստոս երկու բը-  
նութիւն ունի , այսինքն Աստուածա-  
յին եւ մարդկային :

Հ. Որդին Աստուած ինչու  
համար մարդ եղաւ :

ՊԻ. Որդին Աստուած մարդ ե-  
ղաւ զմեզ սատանային դերութենէն  
ազատելու համար, որո՞ւն տակ ին-  
կած էինք մեր Նախահօր Ազամայ  
անհնազանդութեան սլատճառաւ |

Հ. Յիսուս Քրիստոս զմեզ սա-  
տանային դերութենէն ինչպէս ա-  
զատեց :

ՊԻ. Յիսուս Քրիստոս իր սուրբ  
չարչարանքներովը ու խաչին վրայ  
մեռնելովը՝ զմեզ սատանային դերու-  
թենէն ազատեց |

Հ. Ո՞ր օրը խաչուեցաւ և մե-  
ռաւ :

ՊԻ. Յիսուս Քրիստոս Աւագ  
Ուրբաթի օրը խաչուեցաւ և մե-  
ռաւ :

Հ. Ե՞րբ յարութիւն առաւ :

ՊԻ. Յիսուս Քրիստոս Տէրն մեր

երեք օրէն ետքը Չատկին օրը յարութիւն առաւ ։

Հօ . Ո՞ր օրը երկինք ելաւ ։

ՊԷ . Յիսուս Քրիստոս իր յարութենէն քառասուն օր ետքը Համբարձման օրը երկինք ելաւ \* ։

Հօ . Հիմայ Յիսուս Քրիստոս Տէրն մեր ս՛ւր կը գանուի ։

ՊԷ . Քրիստոս Տէրն մեր իր Աստուածութեամբը ամեն տեղ կը գըտնուի , իսկ մարդկութեամբը յԱրքայութեան եւ Ամենասուրբ Հաղորդութեան խորհուրդին մէջ կը գըտնուի ։

Հօ . Արդեօք Քրիստոս մէյ մըն ալ աշխարհք պիտի գայ՞ ։

ՊԷ . Այո՛ , Քրիստոս Տէրն մեր պիտի գայ աշխարհքիս վերջը , կենդանիները ու մեռեալները դատելու համար ։



ԳԼՈՒԽ Գ .

Հ. . . . . Է . . . . . :

Հ. Գու Քրիստոնեայ ես :

ՊԻ. Այո՛ , Քրիստոնեայ եմ շը-  
նորհօքն Աստուծոյ :

Հ. Ի՞նչ կ'իմանաս Քրիստոնեայ  
ըսելով :

ՊԻ. Քրիստոնեայ կ'ըսուի անոր  
որ Մկրտութեան խորհուրդը ընդու-  
նելով , եւ հաւատալով Յիսուսի Քր-  
իստոսի՝ Տեառն մերոյ քարոզած հա-  
ւատքին , անոր հետեւող կ'ըլլայ :

Հ. Քրիստոնէի նշանն ի՞նչ է :

ՊԻ. Քրիստոնէի նշանն Սուրբ  
Խաչն է :

Հ. Ուրեմն խաչակնքէ՛ դքեզ  
որ տեսնամ :

ՊԻ. Յանուն Հօր եւ Որդւոյ եւ  
Հոգւոյն Սրբոյ . Ամէն :

Հ. Զքեզ ո՞վ ստեղծեց :



ՊԷ. Զիս Սատուած ստեղծեց :

ՀԵ. Սատուած զքեզ ինչո՞ւ ըստեղծեց :

ՊԷ. Սատուած զիս ստեղծեց որ զինքը ճանչնամ, զինքը սիրեմ, անոր ծառայեմ, և այսպէս երկնից արքայութիւնը ծառանդեմ :

### ԳՂՈՒԽ Դ.

Խորհուրդներու ՀԵԿ :

ՀԵ. Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ հաստատած Խորհուրդները քանի՞ են :

ՊԷ. Քրիստոսի Տեառն մերոյ հաստատած խորհուրդները եօթն են այսինքն . Մկրտութիւն , Դրոշմ , Հաղորդութիւն , Ապաշխարութիւն , Վերջին օծումն , Կարգ քահանայութեան և Պսակ :

Հ. Ի՞նչ է Մկրտութիւնը :

ՊԻ. Մկրտութիւնը մէկ Խորհուրդ մըն է, որ կը սրբէ ան սկզբնական մեղքը, որ մեր Նախահօր Ազամայ մեղքէն յառաջ եկած է, եւ ամենուս վրայ կը դըսնուի, եւ զանի շնչելով զմեզ Աստուծոյ Որդեգիր եւ Եկեղեցւոյ զաւակ կ'ընէ :

Հ. Ի՞նչ է Հաղորդութիւնը կամ Սրբութիւնը :

ՊԻ. Հաղորդութիւնը կամ Սրբութիւնը մէկ Խորհուրդ մըն է, որ հացին եւ գինւոյն տեսակներուն ներքեւը Քրիստոսի Տեառն մերոյ մարմինը եւ արիւնը, հոգին ու Աստուածութիւնը իրապէս եւ ճշմարտապէս ներկայ կը դանուի :

Հ. Սրժանապէս հաղորդուելու համար քանի՞ բան պէտք է :

ՊԻ. Սրժանապէս հաղորդուելու համար չորս բան պէտք է. նախ

պէտք է հաւատալ որ Յիսուս Քր-  
 թիստոս Տէրն մեր Սրբութեան Խոր-  
 հորդին մէջ ճշմարտապէս ներկայ  
 կը գտնուի: Նրկրորդ՝ պէտք է ամ-  
 մեն մեղքերէն սրբուած ըլլայ Սր-  
 բորդ՝ առջի կէս դիշերէն սկսելով  
 պէտք է ծով պահել, առանց նաեւ  
 ամենախորք բան մը ուտելու կամ  
 խմելու: Զորբորդ՝ Սրբութիւնն առ-  
 նելէն առաջ ու առնելէն ետքը ջեր-  
 մեռանդարար աղօթք ընելու է:

ՀԵ. Սպաշխարութիւնն ի՞նչ է:

ՊԻ. Սպաշխարութիւնն մէկ խոր-  
 հորդ մըն է որ կը ջնջէ ամենն մեղ-  
 քերը որ Մկրտութենէն վերջը դոր-  
 ծեր ենք:

ՀԵ. Սրժանապէս խոստովանե-  
 լու համար քանի՞ բան պէտք է:

ՊԻ. Սրժանապէս խոստովանե-  
 լու համար հինգ բան պէտք է. նախ՝  
 մեղքերնիս լաւ մը քննել ու մղու-

քերնիս բերել: Երկրորդ բոլոր մեղքերնուս վրայ զղջալ: Երրորդ՝ մէյժալ մեղք չի գործելու առաջադրութիւն դնել: Չորրորդ՝ մէկ խոստովանահօր մը առջին ամմեն մեղքերնիս խոստովանիլ: Հինգերորդ՝ այն խոստովանահօր գըրած ասպաշխարանքը կատարել:

Հ. Մեղքերնիս կարելի եղածին չափ կատարեալ խոստովանելու համար ո՞ր բաներու վրայ քննելու ենք խիղճերնիս:

Պ. Մեղքերնիս՝ կարելի եղածին չափ կատարեալ խոստովանելու համար, պէտք է խղճերնիս քննել Աստուծոյ եւ եկեղեցւոյ սլատուի բանքներուն վրայ եւ եօթն գլխուոր մեղքերուն եւ քրիստոնէութեւ եւ ամեն մեկուն իրեն աստիճանի ա վիճակին մասնաւոր պարտքերու վրայ:

ՀԵ . Ա. յսպէս սլաւարաստուելէն  
վերջը , խոստովանահօր առջին եր-  
թալու ատեն ի՞նչ ընելու ենք :

ՊԻ . Խոստովանահօր առջին ծունկ  
չոքելով եւ երեսնիս խաչակնքելէն  
'երջը ըսելու ենք այս Ա. զօթ. քը

Ա. զօթ 4 :

Խոստովանիմ՝ առաջի Աստուծոյ  
Ամենակարողի . եւ երանուհւոյ Մա-  
րիամու միշտ Կուսին . երանելոյն  
Միքայէլի Հրեշտակապետին . երա-  
նելոյն Յովհաննու Մկրտչի , Սրբոյ  
Առաքելոյն Պետրոսի եւ Պօղոսի , եւ  
Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսա-  
ւորչին եւ ամենայն Սրբոյ , եւ ա-  
ռաջի՝ քո , Հայր Սուրբ , քանզի մե-  
զայ յոյժ խորհրդով , բանիւ եւ գոր-  
ծով . վա՛յ ինձ , վա՛յ ինձ , եւ յաւէտ  
վա՛յ ինձ :

Հօ . Մեղքերնիս խոստովանելէն վերջը ի՞նչ ընելու ենք :

ՊԷ . Մեղքերնիս խոստովանելէն վերջը , խոստովանահօր տուած խըրատները ! եւ ազդարարութիւնները մտադրութեամբ մտիկ ընելով վերջէն զղջումնիս անոր յայանելու ենք , կամ զղջման ներդործութիւնը ըսելով եւ կամ ուրիշ նշանով մը :

Հօ . Ըսէ՛ ուրեմն զղջման ներդործութիւնը : ✱

Ներդործութիւնն շղջման :

ՊԷ . Ո՛վ Աստուած իմ , ինչու որ դուն անհուն ու անսահման բարի ես եւ ծայրագոյն սիրոյ արժանի ես , եւ կ'ատես մեղքը , անոր համար ես ալ բոլոր իմ դործած մեղքերուս վըրայ կը զղջամ ու կը ցաւիմ , անոնցմով զքեզ վշտացուցած ըլլալուս համար : Ու քու շնորհացդ օգնակա-



նութեամբը հաստատապէս կ'առա-  
չադրեմ՝ ասկեց վերջը ալ բնաւ մեղք  
չի գործելու, եւ մեղքի առիթներ-  
ըն ն փախչելու :

ԳՂՈՒԽ Ե .

Եկեղեցւոյ իւր :

Հո . Ի՞նչ է Եկեղեցին :

ՊԻ . Եկեղեցին է այն հաւա-  
տացելոց ժողովը, որ բոլոր Քրիս-  
տոնէից հովիւ ու գլուխ եղող Հը-  
ռովմայ Սրբազան քահանայապետին  
հնազանդութեանը տակ կը գրա-  
նուին : \*

Հո . Յաւիտենական փրկութեան  
հասնելու համար Հռովմէական Սուրբ  
Եկեղեցւոյն զաւակ ըլլալը հարկա-  
ւոր է :

ՊԻ . Այ՛ն ինչու ար ուլ որ Հռով-

մէական Սուրբ Եկեղեցւոյն զաւա-  
կը չէ, անոր փրկութիւն չի կայ :

---

ԳԼՈՒԽ Զ .

Առաքիլներն չէ :

Հօ . Քրիստոնէի մը ի գործ դը-  
նելու պարտական եղած առաքիլնու-  
թիւններն որոնք են :

Պր . Քրիստոնէին ի գործ դնել  
պարտական եղած առաքիլնութիւն-  
ներն երեք են այսինքն . Հաւատք ,  
Յոյս , Սէր եւ բարեգործութիւն :

Հօ . Ըսէ՛ ուրեմն Հաւատոյ ներ-  
գործութիւնը :

---

Ներգործութիւն հաստատ :

Պր . Հաստատապէս կը հաւա-  
տամ ո՛վ Աստուած իմ , ինչու որ



Գուն յաւիտենական և անսխալ ճշ-  
մարտութիւն ըլլալով այսպէս յայտ-  
նեցիր Սուրբ Հռովմէական Եկեղեց-  
ւոյն, և նոյն Սուրբ Եկեղեցին կ'ա-  
ռաջադրէ մեզի, որ Ստուած մի  
միայն է, և երեք հաւասար Անձինք  
ունի, որ կը կոչուին Հայր և Որդի  
և Հոգի Սուրբ և թէ Որդին Աս-  
տուած մարդ եղաւ ու մեզի հա-  
մար խաչին վրայ մեռաւ, յարու-  
թիւն առաւ ու երկինքը համբար-  
ձաւ, և աշխարհիս ետքը պիտոր դայ  
կենդանի և մեռած մարդիկները դա-  
տելու, արդարներուն յաւիտենական  
վարձք տալով և մեղաւորաց յաւի-  
տենական տանջանք: Գարձեալ՝ այս  
սրատճառիս համար ինչ որ նոյն Սուրբ  
Եկեղեցին կը հաւատայ ու կը սորվե-  
ցընէ, ես ալ կը հաւատամ ու կ'ըն-  
դունիմ, ու մերժածներն ալ կ'  
մերժեմ

Հ. Ըսէ՛ նաև Յուսոյ ներգործութիւնը :

Ներգործութիւն Յուսոյ :

Պէ . Ո՛վ Աստուած իմ, ինչու որ Գու՛ն ամենակարող բարութիւն ես, կը յուսամ որ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի շարշարանաց ու մահւան արդիւնքներովը՝ կուտաս ինձի յաւիտենական կեանքը, զորն որ Գու՛ն անզեղջ հաւատարիմ ըլլալով խոստմանցդ մէջ, խոստացար անոր՝ որ բարեպաշտ քրիստոնէի պէս կ'ապրի . ինչպէս որ ես ալ կ'առաջադրեմ այնպէս ապրելու Քու սուրբ օգնականութեամբդ :

Հ. Ըսէ՛ նաև սիրոյ ներգործութիւնը :

Ներգործութիւն Սիրոյ :

Պէ . Ո՛վ Աստուած իմ, ինչու որ

Պօւն Յայրագոյն բարի ես և անհուն  
Սիրոյ արժանի, ես ալ կը սիրեմ ըզ  
Քեզ բոլոր սրտանց և ամեն բանէ  
վեր, և Քու սիրոյդ համար կը սի-  
րեմ ու կուզեմ սիրել իմ ընկերներս  
իմ անձիս պէս:

Հց. Ո՛րն է այն աղօթքը, որն  
որ ամեն քրիստոնեայ պէտք է որ  
գիտնայ եւ գրուցէ:

Պէ. Ամենքնիս ալ պարտական  
ենք գիտնալու եւ ըսելու Յիսուսի  
Քրիստոսի Տեառն մերոյ սորվեցու-  
ցած տէրունական աղօթքը, որ է

Հայր մեր՝ որ յերկինս ես, սուրբ  
և զիցի անուն քո, եկեցիցէ արքայու-  
թիւն քո, և զիցին կամք քո որպէս  
յերկինս և յերկրի. Ձհաց մեր հա-  
նապաղորդ տուր մեզ այսօր, և թող  
մեզ զպարտիս մեր, որպէս և մեք  
թողումք մերոց պարտապանաց և մի

տանիր զմեզ ի վորձութիւն այլ վեր-  
կեա՛ զմեզ ի շարէ : Զի քո է արքա-  
յութիւն եւ զօրութիւն եւ փառք  
յաւիտեանս . ամէն :

Հ. Աստուծոյ պատուիրանքնե-  
րը քանի՞ են ,

Պ. Աստուծոյ պատուիրանք-  
ները տասն են :

Տ-ն-բ-նե-յ պ-տ-է-ր-ն-է :

Ա . Ես եմ Տէր Աստուած քո .  
մի՛ ունիցիս այլ աստուած առաջի  
իմ :

Բ . Մի՛ առնուցուս զանուն Աս-  
տուծոյ ի վերայ սնտեաց :

Գ . Յիշեա՛ զօր շաբաթուն (այս-  
ինքն զկիւրակէս եւ զրօնս) սրբել  
զնա :

Դ . Պատուեա զհայր քո եւ ըզ-  
մայր :

Ե . Մի՛ սպանաներ :

Զ . Մի՛ շնար :

Է . Մի՛ դողանար :

Ը . Մի՛ սուտ վկայեր :

Թ . Մի՛ ցանկար կնոջ ընկերի

քո :

Ժ . Եւ մի՛ ամենայնի որ նորա է :

—

ՀԳ . Սուրբ Եկեղեցւոյ պատուի-

րանքները քանի՞ են :

ՊԷ . Սուրբ Եկեղեցւոյ պատուի-

րանքները վեց են : Այսինքն՝

Ա . Կիւրակի ու Տօն օրերը Սուրբ

Պատարագ տեսնել :

Բ . Գոնէ տարին անդամ մը խոս-

տովանիլ :

Գ . Գոնէ տարին անդամ մը՝

Զատիկին , հաղորդուիլ :

Դ . Մեծ պահքը և այլ հրա-

մայուած պահքերը պահել :

Ե. Եկեղեցիէն արգիլուած ա-  
տենները հարսնիք չ'ընել :

Զ. Ունեցած ստացուածքին տա-  
սանորդը ազքատաց ողորմութիւն  
տալ :

Հ. Այս պատուիրանները պա-  
հելով ապրողներուն Աստուած ի՞նչ  
հատուցում պիտի տայ :

ՊԻ. Ով որ Աստուծոյ և Եկե-  
ղեցւոյ պատուիրանքները կատար-  
եալ պահելով ապրելու ըլլայնէ, Աս-  
տուած՝ անոր մահուընէ վերջը յա-  
ւիտենական արքայութիւնը պիտի  
չնորհէ :

Հ. Իսկ այս պատուիրանները  
չի պահողներուն Աստուած ի՞նչ պա-  
տիժ պիտի տայ :

ՊԻ. Ով որ Աստուծոյ և Եկե-  
ղեցւոյ պատուիրանքները՝ չի պահէ  
և անոնց հակառակ կեանք վարելու



ըլլայ , Աստուած անոր մահուընէ վերջը յաւիտենական դժոխք պիտոր տայ :

Հց . Իսկ անոնք որ ծանր մեղք մը չ'ունին , հապա միայն ներելի մեղքով կամ գործած մեղքերնուն ապաշխարանքը դեռ չի վճարած մեռնելու ըլլան , անոնց վիճակը ի՞նչ կ'ըլլայ : †

ՊԷ . Անոնք որ ներելի մեղք միայն , կամ գործած մեղքերնուն ապաշխարանքը դեռ չի վճարած կը մեռնին , կ'երթան Քաւարան , ուր ապաշխարութիւննին կատարելով և մեղքերնէն սրբուելով արժանի կ'ըլլան մտնելու յԱրքայութիւն :

Հց . Գլխաւոր մեղքերը քանի՞ և որո՞նք են :

ՊԷ . Գլխաւոր մեղքերն եօթն են . այսինքն՝

- Ա . Հարստութիւն .  
 Բ . Նախանձ .  
 Գ . Բարկութիւն .  
 Դ . Աղահուստութիւն .  
 Ե . Բղջախոհութիւն .  
 Ջ . Որկրամոլութիւն .  
 Է . Ծուլութիւն .

ա հ ա յ է չ ա )

Ի չ Ի Ա Ե ի ա զ ա

Լ զ ա ) հ ա ) Կ ա ի չ

Լ զ Ե Ի Կ ա Կ է Ի Կ ա

Կ Ե Լ Ի Լ զ ա ա

Հ Ե Բ ա Լ Կ


Ե 3/5



ՀՐԵՇՏԱԿԱՅԻՆ ՈՂՋՈՒՆԱՏՐՈՒԹԻՒՆ

Ողջոյն քեզ Մարիամ լի՛ շնորհօք : Տէր ընդ քեզ , օրհնեալ ես դու ի կանայս եւ օրհնեալ է պառուղորովայնի քո Յիսուս :

Սրբուհի Մարիամ , Մայր Աստուծոյ , բարեխօսեա՛ վասն մեր մեղաւորացս՝ այժմ եւ ի ժամու մահուան մերոյ : Ամէն :




5  
—  
11


22.

1061

17

1061







529

116